

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Չուգափայտ - 3500 մմ երկարությամբ, հենարանի նյութը-պինդ սոճի, թխկի կամ պինդ կեչի, զուգափայտերի հորիզոնական ձողերը պատրաստված են ամուր փայտյա տեսակներից՝ գործարանային արտադրության, փայտը պետք է լինի ամբողջական, հարթ, ողորկ և առանց խուլթերի (փայտյա փշերի) միջուկը՝ բարձր պողպատե միջուկով, որոնք հողավոր միացությամբ ամրացված պետք է լինեն մետաղյա հենոցին կացրած չորս ուղղաձիգ կանգնակների մեջ պտտվող դարձյակներին: Չպետք է լինի կոպիտ մակերեսներ, որոնք կարող են վնաս պատճառել օգտագործողին: Սուր ծայրերով կամ դուրս ցցված տարրեր չպետք է լինեն: Եռակցումները պետք է լինեն հարթ: Սարքավորման ցանկացած մասի անկյունները և ծայրերը, որոնք հասանելի են օգտագործողների համար, պետք է ունենան կլորացում ոչ ավելի, քան $(3,00 \pm 0,01)$ մմ շառավղով, իսկ հատակին հավող մասերը լինեն հարթեցված՝ ռետինե կամ փայտյա տարրերի միջոցով: Եթե կան պտուտակավոր միացումներ, ապա պտուտակավոր միացումների ծայրերը չպետք է դուրս ցցված լինեն ավելի քան 8 մմ. սարքավորման մակերեսից: Դուրս ցցված ծայրերը պետք է պաշտպանված լինի: Ձողերը չպետք է պտտվեն իրենց առանցքի շուրջ որևէ ուղղությամբ: Ձողանները դրվում են հատակից 1600-1700մմ բարձրության վրա՝ 420-620 մմ միջանցքով, արագ և դյուրին բարձրության և լայնության կարգավորմամբ: Նմուշը /նկար 2/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող

օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը $\pm 3\%$: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Վաճառողի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել Գնորդի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել Գնորդի հետ: Հեռ. 010-599-699 (564) Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СЕВ-АРТ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22400000000000000000-26/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	